

տուինք ՄակԴոնալդին, չուտով նորէն հանգիւյնու պայմանով: Ան խնդրեց ղրկել իրեն նորադոյն հրատարակութիւնները Թուրքիոյ եւ հայկական հարցի մասին, իր գրադարանին համար:

* * *

Եւ ահա 1924 թուականը: ՄակԴոնալդ արդէն վարչապետ է եւ մեր վրացի ընկերները, քաջալերուած անոր բարեկամական ցոյցերէն Թիֆլիսի մէջ (1920-ին) եւ արտասահմանում, մէկէն ի մէկ ապստամբութիւն սարքեսին Վրաստանում, բոլշևիկեան տիրապետութեան դէմ: Տեղի ունեցան բազմաթիւ կռիւներ, մեծ արիւնհեղութիւններով:

Մեղի համար մինչեւ օրս առեղծուած մըն է վրացի մենչելի պարագլուխներու այդ դըլ-խապատառ, խիղախ ոստիւնը... Անոնք առհասարակ կը համարուէին աւելի խոհեմ ու շքեղահայեաց, աւելի դիւանադէտ, քան Հայաստանի վարիչները:

Իրաւ է, Ճօրջանիայի ու Չխենկելիի քաղաքականութիւնը, փոխանակ ՄակԴոնալդի քարոզած միութեամբ ձգտելու՝ յանուն կովկասեան հանրապետութիւններու ինքնապաշտպանութեան ("If they had only agreed to settle their differences and to have united in self-defence"...): սկիզբէն ի վեր հակահայ ընթացք բռնեցին եւ միայն Թուրքերու, Թաթարներու հետ սիրաբանեցին, երեւակայելով թէ՛ այդ ընթացքով պիտի կրնային, համակովկասեան փոթորկուած ծովին մէջ իրենց՝ վրացական մակոյկը փրկել կործանումէ, բայց իրենք ալ կործանուեցան:

Հակառակ այդ կարճատես, անմիտ ու աղէտալից քաղաքականութեան՝ սովորութիւն մըն է հայկական որոշ շրջաններուն մէջ՝ վրացիները բարձր դասել իրենց վարիչներ ու դիւանադէտներ:

Անշուշտ, անկախ Վրաստանի եռամեայ գոյութեան ընթացքին, անոր վարիչները տըւին լրջութեան մէկէ աւելի ապացոյցներ ու դարձան Ժողովրդական: Երկրի աշխարհագրական դիրքը, գրեթէ միապաղաղ քրիստոնեայ բնակչութիւնը ազատ՝ Թուրքական մեծ զանգուածներէն, ապա եւ ցարիզմի թողած պատկառելի հարստութիւնը մեծապէս, ի հարկէ,

կը նպաստէին այդ երկրի խաղաղ յառաջագիւծութեան ու վերաշինութեան: Վրացական մտաւորականութիւնն ալ չէր տրորուեր ու յօշոտուեր մերինին պէս համաշխարհային պատերազմի եւ տաճկական ներխուժումներու յորձանքին մէջ...: Եւ ազատ Վրաստանը ունէր՝ բազմաթիւ մտաւորականներ, տարիքոտ առաջնորդներ — Ճօրջանիա, Չխենկել, Չխենկելի, Գեղեջկօրի, Ծերեթելի եւայլն — ամէնքն ալ համալսարանական, քիչ-չատ փորձառու, պատրաստուած մարդիկ, ոմանք նոյնիսկ պատկառելի անուն հանած՝ համառուսական շարժումներուն մէջ:

Արտառոց անակնկալ մըն էր 1924-ի ապրստամբութիւնը, որ Ժողովրդեան ինքնայորդոր բռնկում մը չէր, այլ սարքուած էր արտասահմանեան փախստական պարագլուխներու ձեռքով, որոնց դորձակալները կ'երթեւեկէին «բարեկամ» Թուրքիոյ վրայով:

Ո՛չ մի տարակոյս — ՄակԴոնալդի եւ Ալ-խատաւորական կառավարութեան թատերամուան էր, որ քաջալերել էր վրացի ընկերվարականները՝ այդ անզոյշ ու անխորհուրդ քայլն ընելու: Անոնք, անշուշտ, վստահ էին Անդլիոյ նոր կառավարութեան աջակցութեան վրայ, ինչպէս նաեւ Ազգերու Դաշնակցութեան վրայ, ուր զօրաւոր է Մեծն Բրիտանիոյ ազդեցութիւնը:

Քաջալերիչ հանդամանք մըն էր դուցէ նաեւ այն յայտարարութիւնը, որ ըրաւ Ալ-խատաւորական կառավարութիւնը, երբ 1924-ին, հանդիսաւորապէս ճանչցաւ Մոսկուայի կառավարութիւնը: ՄակԴոնալդի բանաձեւը այդ առթիւ կը պարունակէր նշանակալից վերապահում մը Ռուսաստանի ոչ-ռուս ծայրագուտներու նկատմամբ: Անդլիան, «կը ճանչնար սովետական իշխանութիւնը Ռուսաստանի վրայ եւ այն բոլոր երկիրներուն վրայ, որոնք մանչցեք, ընդունեք եւ սովետական տիրապետութիւնը»...:

Արդ, կովկասեան նախկին հանրապետութիւնները, Հայաստան, Վրաստան, Ազերբեյճան, ինչպէս ՄակԴոնալդին ալ քաջ յայտնի էր, յօժարակամ չեն ընդունած ռուս-սովետական ռեժիմը: Հետեւաբար, բրիտանական կա-